

ՊԱՏԱՍԽԱՆԻ ԱԱՏԻՆԱՑՈՅ ԹԽՏՈՅՆ

Ի Մկրտիչ նկարագրէ, զոր գրեաց հրամանաւ կրդկոսին  
Հայոց եւ մեծ բարունապետին Շումայի\*.

Յաւէտ ծայրացելոյ բնականագոյն նախուսան մերոց սրբա-  
զանից և վսեմական երիցո երանեալ և ամենայն ծայրութեանց  
ծայրագունի համեմատեալ, աստուածականին թիսուսի փոխա-  
նորդի և առաքելական շնորհի և փշման արժանացեալ աթոռոյ(8):  
Եւ միեղինարար կացորդութեամբ յարամանեալ ընկալաք զտառ  
տարրական իմն նըլիբաձիր, մաքրափայլ և աստուածաների որա-  
կացեալ բարեփառ աջոյ մակագրեալ, զոր վերծանեալ տեսուչք և  
վերծանողք տրամեանս եկեղեցոյ: Յորում զտաք զովացուցա-  
նող\*\* և փարատիչ միիթարական, զներածական ձեր մտած... տրա-  
մակայումն զիտաւորութեան, տիրապէս տրամադատական խոկ-  
մամբ երկակի եղբակացութեամբ պատճառաւ, որ վասն ուղղա-  
փառութեան հաւատոյ: Եւ երկրորդ վասն միաբանական սիրոյ,  
որ է սկիզբն և աւարտ յաւէտակաց և յաւիտենից, զոր փողն Տար-  
սոնացի զմինն ամ բարի[աց] պատճառ մակագրէ և զմիւս[ն]  
կենարաբն լրումն աւըինաց աւանդէ և աշակերտ նմին զԱստուած  
սէր քարոզէ: Եւ ձեր վսեմական և մաքուր մակացութիւն ներ-  
բնական ուշեղութեամբ բաղխոնական մակամտածական տենչման  
ըղձանաց միախորհ և միակրաւն յարամանել փութա(j) հաւտին  
տիրական: Վասն որոյ յուսալի է մեզ ձերոյ զերիմաստ հանճարոյ  
զիտաւորութիւն և մեզ բաղձումն անձկութեան տենչանաց, որ  
խանդադակաթ յաւէժ տոչորիմք պասքեալ կարաւտեալ ամենայն  
քրիստոսածան ազանց, նախուսան մերոց հետեւ հայրենատուր  
աւանդութեց եւ ծայրագոյն տրամախոնական մտածութիւն թեա-  
կունել յուղումն հաստատութեան հաւատոյ:

Զոր յառաջագոյն սկիզբն արարեալ լուսաւորութեան մերոյն  
Պարթեի, զոր ընկալեալ մերս եկեղեցի, պահեաց անայլայլի,  
ամբակուռ կնքեալ և պարփակեալ անշարժ վիմարդեան, զնոյն,  
զոր աւանդեաց եկեղեցին Լատինացոց, զերից ս'ը ժողովոյն, զմի-

\* Այս վերնադիթք զրուած է: մի թերթ առաջ, սկսուած է թուղթը  
եւ մի բանի տողից յիտոյ կիսատ թողած: Նոյն զրչով մի թերթ յետոյ  
սկսուած է թուղթը: \*Պատասխանի յատինացոց արարեալ ուղափառ վար-  
դապետացն Հայոց՝ վերնագրով:

\*\* Հ-ում զովացուցանով.

ութիւն հաւատոյ զմիամնական աստուածութեանն, զոր նոցա առաքելոցն լաւանդեցաւ, առաքելոցն ի հոգւոյն ա՞յլ Արդ կա և մնա Հայաստան ի վերա նոյն հիման հաստատուն, զոր ի հոգոյն սրբոյ շինեցաւ:

Հաւատալ մի ա՞ծ, արարիչ և նախախնամող, հայր անըս-կիզըն և անկատարած: Հաւատալ զորդին աստուած սմսկզբնա- բար սկսեալ ի հաւըէ, ոչ ունելով կարծիս ժամանակաց ըստ Ա- րիոսի: Հաւատալ զհոգին սուրբ Աստուած ճշմարիտ, բղիումն ի հաւըէ և հաւասար նմին և ոչ կըսիր կամ պաշտամնատար ըստ Մակեդոնի:

Հաւատալ անձնաւորութիւն(sic) սուրբ երրորդութեանն, մի աստուածութիւն, մի բնութիւն, մի կամք, մի ներգործութիւն և ոչ ի բաց բառնալ զանձնաւորութիւնն ըստ Եւնոմեա և Սարելի: Հաւատալ զանժամանակ ծնունդն հաւը, ծնեալ ի կուսէ, աստուա- ծութեամբն միաւորեալ ի մարմնի և ոչ բնութեամբ ըստ Լեռնի:

Խոստովանիմք զՄարիամն աստուածածին և ոչ մարդածին, ըստ Նեստորի: Խոստովանիմք զաւծեալն Քրիստոս մի բնութիւն, նոր խառնումն սքանչելի և անըշփոթ(sic) միաւորութիւն և ոչ եր- կու բնութիւն կամ ըշփոթմամբ(s) ըստ Եւտիքոսի: Եւ զամենայն զոր ինչ կըսեաց աստուածացեալ մարմնովն, Աստուծոյ խոստովա- նիմք և ոչ սոսկ մարդոյ ըստ Մարկիոնսոսի: ԶՍաՀն Աստուծոյ խաչ և չարչարանքն Աստուծոյ չարչարանք և զմահն Աստուծոյ մահ ըստ Աստուածաբանին. Եթէ Աստուած խաչեալ և արեգակն խաւարեալ: Ոչ ասիմք զոմն մեռեալ և զոմն անմահ մնացեալ, զի այս .՝ ը, բաժանի: Այլ որ անմահն, նոյն և մեռեալ, և որ մե- ռեալ նոյն անմահ մնացեալ: Եւ եթէ ոք անհնարին այսմ լինել կարծէ, նա և կուսական ծնունդն և անխախտ մնալ կուսութիւնն կարի առաւել իմն է անհնարին: Այլ որպէս ծնունդն է սքանչելի, սոյնակէս և մահն սոսկալի և սխրալի. զի ամենայն անհնարինք, Աստուծոյ հնարաւորք հնու եւ ի բաժանել բանական հոգոյն, զաստուածութիւնն ասեմք անրաժանելի, բոլոր աստուածութիւնն ի բոլոր մարմինն և բոլորն ի բոլոր բանական հոգին: Զի աստուածութիւնն ի նոյն բոպէն, որ էառ յարենէ կուսին և խառնեալ միացոյց յանեղ աստուածութիւնն: Եղե մորդն Աստ- ուած ճշմարիտ և Աստուածն մարդ կատարեալ, ոչ երկու, այլ մի խառնում, անբաժանելի և ամենայնիւ ոչ բաժանեալ խոստովա- նիմք, այլ անբաժանելի ի ծնունդն, ի քիրտն, ի վաստակն, ի խաչն, ի չարչարանքն, ի մահն, ի թաղումն, յարութիւնն և ի համ- բարձումն, ի նոտելն ընդ աջմէ ծնողին, այսինքն ի փառ հայ- քենի եղական աստուածութեանն: Զսոյն զաւանութիւնն և ի հա- ւատոյ շինեալ ի վերայ առաքելական վիմին, ընկալաւ Հայաստան-

հայցս եկեղեցի ի յեկելեցոյն լատինացոց, յերից սուրբ ժողովոյն:

Ա. Յառաջին ժողովն որ ի Նիկիա եղև յետ Գ՛Յ և ԺԵ ամի ծնընդեանն Քրստոսի և մեծին Կոստանդիանոսի .Ե. ամի թագաւորութեան նորա, որ էին անդ Գ՛Յ և ԺԵ հայրապետք և պատրիարքունք Զ Մեծն Սեղբեստրոս Հոռմա, Մակար յԵ՝ Էմի, Արիստակէս Հայոց մեծաց, Թադէոս Անտիոքու, Մետրոփանոս Կոստանդինուալսի, Աղէքսանդրոս Աղէքսանդրացի, որք զԱրիստ հերքեցին:

Բ. Եւ Երկրորդ ժողովն, որ եղև յետ ՀԴ ամի(!) առաջին ժողովոյն, ի թագաւորութեանն Թէոդոսի մեծի, որ էին ՃՄ հարք: Եւ պատրիարքունք Զ. Ներսէս Հայոց, Կիւրեղ Երուսաղմանի, Դամասոսի Հոռմա, Նեքտառինոս Կոստանդինուալսի, Տիմոթէոս Աղէքսանդրի, Մելիտոս Անտիոքու, ընդդէմ Մակեդոնի, որ գհողին սուրբ հայհոյեաց:

Գ. Երրորդ ժողովն, որ եղև յետ ԾԲՀ, ամի Երկրորդ ժողովոյն, ի թագաւորութեանն փոքուն Թէոդոսի, հարք Երկերիւր և պատրիարքունք Ե. Մեծն Սահակ Հայոց, Յորնաղ յԵ՝ Էմի, Կէլէստիանոս Հոռմա, Կիւրեղ Աղէքսանդրու, Յոհաննէս Անտիոքու, ընդդէմ մարդադաւան Նեստորի, որ և աքսորեցին ի Խուժաստան:

Յետոյ յայտնեցան չարափառ ոմանք ի նոյն թագաւորական քաղաքին. Փլարիանոս պաղատան եպիսկոպոսն Նեստորի աղանդովն, և այլ բազումք աղանդոյն այնմ հետեւեալ: Յայսց հակառակութեանց ազմուկ շփոթեալ և խոռոշութիւն ոչ սակաւ լինէր ի մէջ քաղաքին: Վասն որոյ զայրացեալ թագաւորին Թէոդոսին փոքու հրամայեաց կրկին ժողով լինել ի նոյն քաղաքին Եփեսոս ՃԼՀ հարք ազգեցութեամբ հոգոյն սրբոյ: Եւ էին զլիսաւորք Դէոսկորոս Աղէքսանդրու, Տիմոթէոս ջահն հաւատոյ, որ գուզն կոչեցաւ, Յորնաղ յԵրուսաղմի, Դոմիաս Անտիոքու և Մտաթէոս Բիւրիառոյ, Թէոդուլոս Կեսարու, Յուլիոս Հոռմա, ը ամի(!) յետ \* առաջին ժողովոյն Թէոդոսի Փոքուն: Որք մեծաւ քննութեամք հատին զախտացեալ անդամն եկեղեցոյ, և ի վերա առաջնոյն հիման հաստատեցին զեկեղեցիս ուղղափառաց ի զլուխն ՔՄ: Եւ սահմանեցին անդըրդւելի(ս) հաստատ թեամբ զսուրբ և զանբիծ հաւատու ուղղափառաց զհաստատեալն երից սուրբ ժողովոյն:

Յետ որոյ սակաւ ինչ կացեալ վաղճանեալ բարեպաշտ Թէոդոս փոքրն: Ապա զկնի նորա առնու զթագաւորութիւնն Մարկիանոս, ընդրութեամք մաւրաքըւելին իւրոյ Պաւղքերա և սոքա համախոնք էին Նեստորի և Փլարիանոսի, որ և վրէժիննդիր եղեն և

\* Զ-ում Դամասկոս

2 Զ-ում ԺԲ

\* Զ-ում «յետոյ»

յիշեն զուխտն, զոր եղին ընդ Լոռնի, զոր լուեալ նմայ (ՏԵ) մեծապէս խրախացաւ և յուղարկեաց և էառ զտումարն ի ձեռն կարտինաւ- բացն իւրոց, Տրոմիկոսի, Լիրիքա և Ղունկինիոսի: Ընդ որ հա- ճեալ Մարկիանոս և Պողքեր եւ սկսան թագաւորական հրամանաւ և արքունական զօրականաւք ածել [J]ամենայն կողմանց զպատրի- արգունսն և զեպիսկոպոս աշխարհաց ի Քաղկեդոն քաղաք Բիւ- թանացոց որ է մերձ ի Կոստանդինուպալիս: Որ և ժողովեցան եպիսկոպոսք Զ Ճ և ԼԶ, որ և գլխաւորք էին այսոքիկ: ի Հռոմա փոխանորդքն Լոռնի, զոր վերագոյն ասացաք: Անդիոքու Մաքսիմոս, Կոստանդինու Անատոլիս, Երուսաղէմի Յորնաղ, Աղէք- անդրու Դէոսկորոս, և սուրբն Պետրոս Գաղա եպիսկոպոսն, և լուծեալն Թէոդորիտոս Կիւրոս քաղաքի, զոր այժմ եղին գլուխ ժողովոյն: Եւ առաքեն պատգամաւորս ածել զնեստոր յաքսորա- նացն և նա զառհաւատչեայն ի վերուստ ընկալաւ վասն հայնոյու- թեանն ի հրեշտակէ հարեալ: Եւ գարձան պատգամաւորքն ու- նացն և վասն մեծի ամաւթոյն ծածկեցին զբանն, զի մի իմաց- եալ ժողովն, խարանեսցի գործն:

Ապա այնուհետեւ Մարկիանոս և Պաւլքեր խոշտանգելով ի հաւան ածէք (ՏԵ) զեպիսկոպոսունսն: Ձեռնարկեցին զտումարն Լոռնի և հաստատեցին զհաւատն նեստորի, դաւանել զՔրիստոս սոսկ մարդ ծնեալ ի Մարիամա (J) և ասել Քրիստոսի երկու բնութիւն և երկու կամք, երկու ներգործութիւն: Իսկ մեծ և անյաղթ ախո- յեանն հաւատոյ սուրբն Դէոսկորոս երկու հարիւր եպիսկոպոսաւք ոչ հաւանեալ երկարնակ ժողովոյն և մարդագաւան տումարի Լոռ- նին, այլ պնդիալ զմէջո իւրեանց ճշմարտութեամբ և ետուն զան- ձինս ի մահ և ի չարչարանս վասն անուանն Քրիստոսի:

Իսկ ի ժամանակս Զենոնի բարեպաշտ և ուղղափառ կայսերն, վերստին հաստատեցաւ ուղղափառութիւնն և ամենայն կալանա- ւորքն արձակեցան և գնացին մեծաշուք պատուով իւրաքանչիւր վիճակս և հալածական եղեն երկարնակքն յամենայն կողմանց, զի Աստուած զփառաւորիչս իւր փառաւորէ: Եւ հայաստանեացս ե- կեղեցի անշարժ մնաց յամենայնիւ ի վերայ նիկիական եղեալ հի- մանն, յառաջինն և յերկրորդն և յերրորդն: Ոչ եղեն համախոն նեստորի և ոչ ընդունին զքաղկեդոնիկն: Այս է պատասխանի տանն Աքեղայ և եկեղեցոյն արմենիի Զի եթէ ի (ՏԵ) եկեղեցին լատինացոց կամիք զգալը (Տ) մեր առ ձեզ վասն սիրոյ և հաստատութիւն, և միաբանութիւն առ ի հաստատել զնիկիականն դաւանութիւն, և մեք ի նոյն յաւժարիմք և զնոյն խնդրեմք և զնոյն անխախտ ունի մերս եկեղեցի և հաստատուն, և ոչ ւիւնիւ միոյ առաւելեալ կամ նըւազեալ: այլ զնոյն զօր երկու ինքնակալ կայսերէ, մեծն Կոստան- դիանոս եւ մերն Տեղատես եւ բազ ախոյեանեն եկեղեցոյ սուրբն

Սեղբեսորոս եւ Թարթեւականն Գրիգորիոս Երիասոսի արեամբն գրեցին դաշինս եւ սահմանեցին տառս կանոնական լինել մի հաւե եւ մի հովիւ համանգամայն ագասնց:

Ապա՝<sup>\*</sup> եւ ով ոք որ սմին միաբանութեան սիրոյ եւ խաղաղութեան լիցի պատճառը, եղիցի նա որդի լուսոյ եւ որդի տրոնց եան: Ապա թէ և զմեղ կամիք երկարնակը լինել, կամ զթրիստոս սոսկ մարդ դաւանիլ կամ զՄարիամն մարդածին կամ երկու բնութիւն, երկու կամք և երկու ներգործութիւն ասել Քրիստոսի կամ անգոսնելի կիրս, կամ զաստուածութիւնն բնակութեամբ ասել ի մարմնի կամ զչարչարանսն և զիաչն սոսկ մարզոյ կամ ապականացու զմարմինն Քրիստոսի, և յետ յարութեանն ապա եղեալ անապական, կամ զՈրդին Աստուած արարած ասել կամ զՀոգին Աստուած կրսեր և պաշտանատար, կամ ի Հաւրէ և Որդոյ րզիսեալ կամ զՈրդին աստուած աննման Հաւր, կամ զանձնաւորութիւն Նըրորդութեանն ի բաց բառնալ ըստ Մարելի, զոյն և որ սոցին նման, զոր քաղկեդոնիկն աւանդ[եաց], ոչ ընդունի Հայաստանեացս եկեղեցի և ոչ կարաւտանայ այդպիսի<sup>\*\*</sup> սիւնհոգոսի: Զի անխախտելի է մնացեալ ի վերայ հիմանն հաստատութեան և եթէ մի անձն մընա(s) յազգէ արամեան, անհնարին է հետեւ քաղկեդոնի:

Գոհանամք զԱստուծոյ, զի դեռ ևս Հայաստանեացս եկեղեցի ունի ժառանգս բազում. դասատունս և առաքելական աթոռս, պատրիարք և մետրապալիտք և եպիսկոպոսունք ըստ գաւառաց գաւառաց: Եւ զմարմնաւոր իշխանութիւնն նախախնամութիւնն Աստուծոյ երարձ ի մէնջ. զի եթէ բարի էր երկրաւոր թագաւորութիւնս, ինքն Քրիստոս հաղորդէր մարմնաւոր թագաւորութեան, այլ արհամարհեաց և հետևողացն իւրոց խաչ և չարչարանս քարոզեաց: Եւ զրեալ է ձեր ի չափաքերական և ի հրաշառաստիկան տաղիւք մակարդակեալ տառին վասն միաբանութեան առաքելական եկեղեցոյ: Արդ զմիաբանութիւնն քաղկեդոնիկն այն բաժանեաց. եթէ զքաղկեդոնին բառնայք ի միջոյ և զերից սուրբ ժողովոյն ընդունիք, զոր ի վերոյ գրեցաք, լինի միաբանութիւն եկեղեցոյս Հայաստանեացս ընդ եկեղեցոյն լատինացոց և յունաց և այլ առաջ քրիստոսադաւան ազանց, և մոխրամած դիմաւք հլու և հնագանդ լինիմք հրամանաց ձերոց գերազրական իշխանութեանդը Ապա եթէ զեկամուտն հաստատել կամիք, և զանշարժն ընդ թիւ-

\* «Ապա» խօսքը բուն բնագրի շարունակութիւնն է, որ գեղծարաբը հետեւեալ նախադասութիւնը ներմուծելով, Թողել է իւր արարմունքի հետքը ներմուծութիւնը Դաշնաց Թղթի հետեւողութեամբ:

\*\* Զ-ում բայցպիսի:

ըելոյն յարամանել, այդ անհնարին է լինելը Զի մերս եկեղեցի ոչ միաբանի այդմ գործառութեան:

Վերջինս ի մանկունս սիոնի անյիշելի հողիկս, անարժան Մկրտիչ կարծեցիալ խմատակ, բացասութեամբ եպիսկոպոս Համիթ քաղաքի, մականդւն Նաղաշ մակազրեալ, հրամանաւ տեառն իմոյ Կոստընդին պատրիարքի և քաջ ախոյեանին և անյաղթ փելլիսոփային Թումա քարունապետի, արևելեան հոհոտորի, սուղ ինչ և զգիր(?) տրամադատեալ, պատասխանի եկեղեցոյն լատինացոց, զոր վերազրեալ յԱղամա մինչ ի ծնունդ մարդացելոյն Աստուծոյ ԲՃԱԸ ամի, և ի մարդեղութենէն Քրիստոսի մինչ ի հայ թըգականն ԶԾԳ.(!) ամի, [ի] ծնընդենէն Քրիստոսի մինչ առ մեղ ՌՆԱԸ ամի և ի Լուսաւորչէն մերօյ մինչ առ մեղ ՌՃԱԸ ամի. Եւ ի նիկիական ժողովոյն մինչ առ մեղ ՌՃԺԲ ամի. ի Կոստանդնուպատրի սուրբ ժողովոյն մինչ առ մեղ ՌԽԲ.(!) ամի. յեփեսոսի ժողովոյ մինչ առ մեղ ԶՂԴ.(!) ամի. ի Քաղկեդոնի ժողովոյն մինչ առ մեղ ԶԾԹ(?) ամի: ի Միականութեան յարարարդեալ արմէնապարի համարողական՝ արհեստի ՊՁէ թվին, յամսեանն մայիս, վեշտասան աւուր չորեքշարթի, և նվիրեցաք ի ձեռն Արզմսեհի սարկաւագի, որ է նվիրակ տեառն Ասայիս արքեպիսկոպոսի, որ եղե առ մեղ արգելական ամիսս Ժ վասն պղտորութեան ժամանակիս, որ շատ աշխատանք կրեաց, որոյ տացէ տեր Աստուած մասն բարի: Եւ ես Յոհանէս Կաֆացի բացասութեամբ արեղայի և սպասաւոր ուղիղ բանի առ ուս Թումա վարդապետի Զեռա[մբ]. . . զոր մեր մալազի: Ով կարդացողք [ձեր]ը աղաւթիւք Քրիստոս Աստուած . . . (մի բառ) յիշման . . . (առնէ?) (մի բառ) զմեղ արժանի, Քրիստոս առնէ զձեղ արժանի արքայութեանն . . . անկալի ամէն:

—♦♦♦♦♦—